

ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ ԽՈՒՐԻ ԱՍՈՐԻ
(306—379)

Ընդհանրական Եկեղեցու մեծագույն սրբերից մեկը: Ծնվել է 306-ական թթ. Միջագետքի Եդեսիա քաղաքում, հեթանոս քրմի ընտանիքում:

Մանուկ հասակում ընդունում է քրիստոնեությունը և իր ողջ կյանքի ընթացքում անապատական-ճգնավորական կյանք վարում:

Երիտասարդ տարիքում աշակերտում է Ասորական Եկեղեցու մեծ հայրապետ Ս. Հակոբ Մծբնացուն: 325 թվականին մասնակցում է Նիկիո Տիեզերական ժողովին: 363 թվականին այցելում է Եգիպտոս՝ ծանոթանալու տեղի վանական ճգնավորական կյանքին: 370—71 թթ.՝ Կապադովկյան Կեսարիայում Ս. Բարսեղ Կեսարացու ձեռքով ստանում է սարկավագական աստիճան:

Այնուհետև իր ողջ կյանքը անց է կացնում վանական ճգնավորական վարքով՝ չընմոռանալով սակայն քրիստոնյա աշխարհին տալու իր գրական-մեկնողական տաղանդի պտուղները՝ իր գրքերը, որոնք բազմաժանր և չափազանց շատ են: Մահացել է Ասորիքում 379 թվականին՝ 75—80 տարեկան հասակում:

Հայաստանյայց Եկեղեցին հարգում է հիշատակը Ս. Եփրեմ Խուրու, տարին երկու անգամ՝ Ս. Ծննդյան պահքի շրջանին և «Երկոտասան վարդապետաց» օրը տոնելով այն:

Ստորև «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Սուրբ Եփրեմ Խուրի Ասորու որոշ աղոթքների արևելահայերեն աշխարհաբար թարգմանությունը[1]:

ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱԲԱՋՅԱՆ

---

[1] Թարգմանությունը կատարվել է 1838 թ. Շուշիում հրատարակված «Գիրք աղօթից սրբոյ հօրն մերոյ Եփրեմի Խուրի Ասորւոյ» աղոթամատյանից:

ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ԵՓՐԵՄԻ ԽՈՒՐԻ ԱՍՈՐԻՈՅ

Աղոթք Ա.

«Տե՛ս, Տե՛ր, իմ տառապանքները և բազմամեղիս հոգու ցավերը. դարձիր՝ ների՛ր և առաջնորդի՛ր դեպի Քեզ: Ինչպես ասացիր՝ «Դարձեք դեպի ինձ, և ես կդառնամ դեպի ձեզ»:

Բ

«Ինձ՝ լքվածիս, ողորմիր, ինձ՝ եղկելիիս, օգնիր, ինձ՝ խավարածիս,

ճառագայթիր, ինձ՝ մոլորվածիս, որ լի եմ մեղքերով և անթիվ հանցանքներով ու անօրենության հորձանքներում տարուբերվելով լողում եմ՝ առաջնորդիր»:

Ե

«Ո՛վ բարերար և մարդասեր Տեր, առանց չարչարանքների և ժուժկալությունների ինչպե՞ս ազատվեմ իմ մեղքերի առատությունից. (քանզի) մարմնով տկար եմ և հոգով՝ խավար, ողորմի՛ր, Տեր, և ինչպես որ ցանկանում ես, օգնիր ինձ»:

Ը

«Լույս ճշմարիտ՝ Քրիստոս, որ լուսավորում ես ամեն մի մարդու, լուսավորի՛ր մեղքերի հետևանքով խավարածիս, բաց սրտիս աչքերը և հաստատի՛ր (ինձ) Քո պատվիրանների նկատմամբ երկյուղի ու սիրո մեջ»:

Ժ

«Շատ է ինձ, Տե՛ր, բայց հույս ունեմ Քո ողորմության, որովհետև շըներն էլ են կերակրվում իրենց տիրոջ սեղանի վրայից թափված փշրանքներով. շուն կոչիր ինձ, Տե՛ր, որ գալիս եմ Քո ետևից: Բարի հովիվ, փնտրիր մոլորվածիս...»

ԺԶ

«Պատկերացրո՛ւ, Տե՛ր, աչքերիս առջև Քո անհրաժեշտ գալուստը. Քո աՀեղ դատաստանի երկյուղով դողացրո՛ւ մարմինս՝ սգալու և անդադար լալու համար: Քո արարչական սիրո գութը մի՛ փակիր ստեղծվածիս նկատմամբ, որ մեռած եմ մեղքերիս պատճառով»:

ԺԸ

«Արդարության արեգակ՝ Փրկիչ և ազատիչ Հիսուս Քրիստոս, Քո լույսին եմ ապավինում. լուսավորի՛ր և ջերմացրո՛ւ սիրտս: Հրակիզի՛ր իմ չար մտքերը (խորհուրդները). հալեցրո՛ւ մեղքերիս սառնամանիքները: Իմ հոգուն, Տե՛ր, գարուն շնորհի՛ր՝ ծաղկելու և արդարության պտուղը պտղաբերելու (համար)»:

ԻԱ

«Բա՛ց, Տե՛ր, սրտիս փակ դուռը և Քո լուսավորության ճառագայթները ծագեցրո՛ւ ներս: Սրբի՛ր իմ մեղքերի աղտոտությունները ու բժշկի՛ր հոգուս վերքերը: Ուժեղացրո՛ւ (իմ մեջ) Քո երկյուղը և զորացրո՛ւ՝ ամեն ժամ արդարություն գործելու»:

ԽԲ

«Առաքի՛ր, Տե՛ր, Քո խաղաղության հրեշտակին որպես վերակացու և պահապան իմ անձին: (Առաքիր) որպես իշխանություն՝ իժերի ու քարերի վրայով գնալու և թշնամու ողջ զորությունը ոտնահարելու: Պահպանի՛ր ինձ, Տե՛ր, (Քո թևերի հովանու տակ) որպես բիբը աչքի մեջ»:

ԽԶ

«Նայի՛ր, Տեր, թշնամու կողմից կողոպտված իմ անձի մերկությանը, երբ այժմ խայտառակ ու ամոթալից կանգնել եմ Քո առաջ: Մարդասիրի՛ր և հագցրո՛ւ ինձ զգեստ: Շնորհ արա՛ և ուրախացրո՛ւ՝ Քո կողքին բազմողների հետ լինելու կոչումով»:

ԽԸ

«Լսի՛ր, Տե՛ր, անառակիս աղաչանքները, որ ամոթով կանգնած եմ Քո առջև. Հայրական հարստությունը վատնելով՝ սովամահ կորչում եմ (կործանվում եմ)։ Կերակրվելու մեջ հավասարվեցի անասուն խոզերին և նմանվեցի նրանց»։

ԿԱ

«Փրկի՛ր, Տե՛ր, սատանայի գաղտնաձիգ նետերից, որ, բազում մեքենայություններով շրջապատելով,—պաշարել է ինձ։ Գերելով բանականությունս, առաջնորդում է գերի լինելու մեղքերի ցանկությանը՝ ենթարկելով ինձ թշնամիների ծաղրուծանակին»։

ՀԲ

«Փնտրի՛ր, Տե՛ր, եղծված և կորսված՝ Քո պատկերով ստեղծվածիս, որ մեղքերի աղբի և տիղմի մեջ ամփոփված եմ, և դիր առաջին այն գանձանակի մեջ, որտեղից վայր ընկավ»։

ԶԴ

«Ապրեցրո՛ւ ինձ, Տե՛ր, երկյուղով և զղջմամբ, արտասուքներով և հառաչանքներով, սիրով և սրբությամբ, շնորհով և ճշմարտությամբ, գիտությամբ և բոլոր առաքինություններով»։

ԶԷ

«Բժշկի՛ր ինձ, Տե՛ր, հպարտությունից ու ամբարտավանությունից, անապիառությունից և մարդկանց հաճոյանալու ձգտումից, ոիւակալությունից, նախանձից, ատելությունից և բոլոր տեսակի (այլ) չարիքներից։

ԶԸ

«Փրկի՛ր ինձ, Տե՛ր, մարդկային գովեստներից, փառքից և մեծարանքներից, խավարիս լույս կարծելով իմ՝ եղկելիիս և ողորմելիիս մասին բարի բաներ են համբավում։ Հոչակում են ինձ առաքինի, մինչդեռ արտասվելի եմ և անթիվ մեղքերով լի։ Ծածկի՛ր ինձ սուտ գովեստների և երանությունների լույսից, որովհետև չգիտեն իմ մեղքերը։ Երևում եմ սրբության մեջ, բայց լի եմ աղտոտություններով, կերպարանափոխվում եմ առաքինությամբ և ապրում՝ անառակության մեջ, փայլում եմ երկյուղածությամբ և գործում՝ մարդկանց հաճոյանալով, գիտեմ ճշմարտությունը և սուտ եմ խոսում, գիտեմ արդարությունը և անօրենություն եմ գործում»։

ՂԳ

«Հաղորդակից արա՛ ինձ, Տե՛ր, Քո աստվածային սիրուն, սիրել Քո սյատվիրանները և գնալ Քո ճանապարհներով, մինչև մահ չարչարվել Քո անվան համար, փառավորվել և դասվել Քո սրբերի շարքում և միշտ ուրախանալ Քո կամքը կատարողների հետ միասին»։

Ճ

«Հեռո՛ւ պահիր, Տե՛ր, բերանն իմ՝ բամբասելուց, լեզուն իմ՝ չարախոսելուց, ականջս՝ չար լուրեր լսելուց, ձեռքերս՝ հափշտակելուց, ոտքերն իմ՝ անառակ ընթացքով գնալուց, և իմ (մարմնի) բոլոր անդամները զգաստացրու՝ միշտ Քեզ հաճելի բաներ կատարելու»։